

ճացեալ բերկրի եւ գոհանայ զԱստուծոյ : Այլ եւ մեզ այսու լինի մխիթարութիւն եւ սփոփութիւն, որք եմք ի ներքոյ լծոյ այլազգեացս, եւ ակն ունիմք՝ թէ ո՛չ լիցի կոխան անուն Քրիստոսի ի մէջ թշնամեացն Սաշին Յիսուսի, այլ մանաւանդ բարձրացի, եւ մեք պարծեսցուք ի միասին հանդերձ ձեօք իբրեւ զանդամս Քրիստոսի . թէպէտ այժմ զոլով ընդ իշխանութեամբ անողորմ բռնաւորաց, եւ չար զազանաց մատնեալ վասն մեղաց մերոց, յոյժ վշտանամք, եւ անտանելի սուգ ունի զսիրտս մեր, զի ի վեր քան զչափ բարձրացաւ խաղտումն Եկեղեցւոյ Քրիստոսի, եւ անկարգութիւն օրինաց, մինչ զի ոչ կարէ հայր ընդ որդւոյ խօսիլ, եւ մայր ընդ զստեր, եւ վարդապետ ընդ աշակերտի ի յահէ հաւատոյ ելանելոյ . եւ ոչ որպէս եկեղեցիք ընդ հովանեաւ թեւոց քոց հաստատուն մնան, եւ իբրեւ զարեգակն փայլեն, եւ մանկունք եկեղեցւոյ ի վայրի դալարւոջ արածին, եւ ի ջուրս հանդստեան սնանին : Արդ՝ անկեալ զոլով ի մէջ այսպիսի՛ տառապանաց, եւ ոչ զտանելով այլուստ մխիթարութիւն վշտաց մերոց, ձեր Սրբութեանդ յայտնեմք զնեղութիւնս մեր, թերեւս այսու լիցի զիւրութիւն սրտից մերոց, եւ դուք ցաւակից լինիք աղէտիցս մերոց, եւ վշտակցարար շարժիք առ Ազգս մեր, որպէս առ ոսկերս ոսկերացդ, եւ անդամս անգամոցդ . եւ մի՛ հեռացուցանիցէք հայրակա՛ն դուք ի մէնջ, զի ոչ եմք օտարք, այլ եմք զինք արեան Քրիստոսի, եւ ոչխարք բանաւոր Հօտին նորին, եւ ձեօք պարծենամք հանապաղ